

1838—1840ին՝ Տատեան Պօղոս և Տատեան Յովհաննէս պէյերը (այս վերջինն հայր հանգուցեալ Բարձր. Յարութիւն-Գարեգին փաշայի Տատեան)՝ տիրացած էին բացառիկ փայլուն զիրքի Կ. Պոլիսի հինաւորաց աշնուականներուն մէջ՝ ըլլալով Տէրութեան պարուքնի պաշտներուն յառաջդէմ զաւակները, և՛ իրրեւ անոնց յաջորդ՝ ունենալով իրենց բարի ու բերրի տրամադրութեան ներքեւ անսահման վարկ և բարի վստահութիւն՝ Օսմանեան Վեհափառ Խնքնակալին սիրելի ըլլալու աստիճան. մանաւանդ Յովհաննէս պէյ Տատեան, որ խոհուն գիտուն և մատենագիր՝ անձնաւորութիւն մըն էր՝ շատ բարեպաշտ ու բարեգործ, և քանիցս ճամբորդեց Եւրոպա մեքենական գիտնասիրութեամբ, ու զոնց անընդհատ երեք չորս տարի մեքենական գիւտի մը ուսումնասիրութեան՝ չարաչար աշխատութեամբ:

Մանուկ, Յարութիւն, Դէորդ և Խաչիկ Քափամաճեան եղբարք՝ ծագումով Տիւրիկէն՝ խնամեցան այդ միջոցներուն Տատեան Պօղոս պէյի հետ, և ա'ս եղաւ իրենց առեւտրական միջակ տաղանդին ու գիրքին ⁽¹⁾ համար հզօր առիթ մը՝ Պօղոս պէյի թեւարկութեամբ ու եւրոպական համբաւովը՝ բանալու մեծկակ Տուն մը վաճառական ի Մանչէսթըր թէ՛ Կ. Պոլիսի առեւտրական հրապարակին թէ՛ Օսմանեան Տէրութեան հայթայթելու համար մեծաքանակ երկաթ մանիֆաթուրայ ևլն.:

Ունենալով իրենց շուրջն հնարիմաց սակայն մեծ մասով ռամիկ ստորադրելոց բազմութիւն մը, որ ո'չ տուժար բռնել ո'չ ալ արեւմտեան լեզու մը գիտէր, Քափամաճեանք մինչեւ 1870 փառաւորապէս վայելեցին անգղիական վաճառատուններու գործարաններու եւ

(1) Կըսուի թէ Քափամաճեանք առաջ պարզ ֆափամաճիներ էին Կ. Պոլիսի շուկային մէջ: